

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԵՎ ՎԱՂ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՅԱՆ
ԲԱՅԱԶԵՎԵՐԸ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ «ԳԻՐՔ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ» ԵՐԿՈՒՄ

Առաքել Դավրիժեցու «Պատմությունը» հայ ժողովրդի տասնյոթերորդ դարի պատմության ուսումնասիրման համար բացառիկ աղբյուր է: Պատմիչն իր նկարագրած շատ իրադարձությունների ականատեսն է եղել և ջանացել է ճշգրտել փաստերը, անուններն ու թվականները:

Տասնյոթերորդ դարը գրաբարի անկման շրջանն էր: Այն արդեն ոչ միայն խոսակցական լեզու չէր, այլև լատինաբան կրոնավորների ձեռքով սկսել էր վերածնվել և կորցնել իր ազգային ու համաժողովրդական բնույթը: Գրական լեզուն ինչպես քերականական կառուցվածքով, այնպես էլ բառապաշարով ձևափոխված և լատինաբանություններով աղճատված գրաբարն էր:

Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ի լեզուն, սակայն, էապես տարբերվում է ոչ միայն վերոհիշյալ լեզվից, այլև գրաբարից: Ճիշտ է, պատմիչը պարզ ժողովրդական, նույնիսկ տեղ-տեղ հեքիաթային ոճով ու արտահայտություններով է շարադրում, երբեմն էլ գործածում օտար բառեր, բայց դա կատարում է գիտակցաբար, կարծես ոճական նկատառումով, քանի որ նախ այդպիսի բառերի հայերեն համարժեքներն է նշում, հետո էլ դրանք կիրառում է միայն հերոսների լեզվում և ոչ թե հեղինակային խոսքում:

Դավրիժեցու լեզուն, ինչպես նշեցինք, միանգամայն տարբերվում է իր ժամանակի աղավաղված ու լատինաբանություններով հագեցած գրաբարից: Վարագ Առաքելյանն այդ մասին գրում է. «17-րդ դարի հեղինակը, որ ծնվել է ու կրթվել լատինաբան հայերենի շրջանում առիթ չի փախցնում այդպիսի հայերերենը ըննադատելու: Նա որևէ գրքի առաջին թերթյունը համարում է նրա ճոռոմաբանությունը, անհասկանալիությունը»¹:

Բանասերներից ոմանք էլ, բարձր գնահատելով Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», բացասաբար են արտահայտվել նրա լեզվի ու ոճի մասին: Մասնավորապես Գևորգ Ջարբխանյանն այդ առիթով գրում է. «Ընտիր լեզուն ունենալէն շատ հեռու կը սեպուի»²: Ոմանք էլ գտնում են, որ Դավրիժեցին գրել է «տկար գրաբարով», «ժողովրդական և այլազգի» բառերով համեմված (Գ. Ջամինյան):

¹ Վարագ Առաքելյան, Առաքել Դավրիժեցի, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 3, էջ 42:

² Գևորգ Ջարբխանյան, Պատմութիւն հայերեն դպրութեանց, մաս Բ, Վենետիկ, 1878, էջ 178:

Առաքել Դավրիժեցին ընդհանրապես դեմ է վերամբարձ լեզվին ու ոճին, և կարելի է վստահ ասել, որ անգամ օտար, ոչ հայեցի բառերի ու կառույցների գործածությունները բխում են նկարագրվող հատվածի բովանդակությունից յուրահատուկ երանգավորում տալու նպատակով: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ Դավրիժեցու երկը պարունակող մայր ձեռագիրը չի պահպանվել, և մեզ են հասել միայն ընդօրինակվածները, որոնք, իհարկե, որոշ չափով տարբերվում են պատմիչի գործից: Մասնավորապես Ոսկան Երևանցին նկատելի փոփոխություններ է կատարել, ջնջել է առանձին բառեր, տողեր, վերադասավորել նախադասություններ: Բացի նրա հրատարակությունից՝ մյուս ձեռագրերը գրեթե նույնատիպ են: Դա էլ ապացուցում է, որ հենց Երևանցին է կատարել փոփոխություններ, ոչ թե մյուս ձեռագրերը հրատարակողները:

Այդ միջամտությունների ժամանակ Ոսկանը ձգտում է Դավրիժեցու լեզուն ավելի մոտեցնել դասական գրաբարին և մյուս ձեռագրերում հանդիպող, ասենք, «հասարակ», «ռանկական» բառերը փոխարինում է գրական համարժեքներով («էրեց» բառի փոխարեն նա գործածում է «այրեց», «վերուցեն» ձևը դարձնում է «բարծին» և այլն):

Այս հոդվածում կանոդրադառնաք Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ի «Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց» գլխում հանդիպող շեղումներին (խոսքը վերաբերում է միայն բայական համակարգի յուրահատկություններին):

Նախ նշենք, որ գրքի այս գլուխը (մի քանի այլ գլուխների հետ) ուղղակի վերագրվում է Առաքել Դավրիժեցուն, և ըստ որոշ բանասերների՝ նրա գրչին չի պատկանում (Մանուկ Աբեղյան): Եւ իրոք, լեզվական մեծ տարբերություն կա այս գլխի ու ամբողջ գրքի մեջ, ինչը հնարավոր է դարձնում հեղինակների տարբերությունը: «Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց» մասը հիմնականում գրված է զուտ միջին հայերենով, և բայական ձևերն էլ միջինհայերենյան, տեղ-տեղ աշխարհաբարյան են³:

Պետք է նշել, որ հեղինակը գրաբարից շեղումներ կատարում է ոչ միայն քննարկվող հատվածում, այլև ամբողջ գրքում: Սակայն այդ մասում կատարված շեղումներն ավելի շատ են, քան ամբողջ գրքում հանդիպող ձևերը միասին վերցրած:

³ Դավրիժեցու «Պատմության»՝ մեր ուսումնասիրած տարբերակները ևս տարբերվում են միմյանցից ինչպես լեզվով, այնպես էլ էջերի քանակով: Սա ևս ապացուցում է, որ տարբեր հրատարակություններում գրքի տարբեր գլուխներ (մասնավորապես «Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց» գլուխը) երբեմն դուրս է մնացել: Վարագ Առաքելյանը Դավրիժեցու մասին իր հոդվածում («Առաքել Դավրիժեցի», «Պատմաբանասիրական հանդես», 1970, N 3) նրա գրքի մասին գրում է, որ այն ունի մոտ 400 էջ. իսկ 1990թ. հրատարակությունը, որտեղ ընդգրկված են նաև վերոհիշյալ գլուխները, ունի ավելի քան 500 էջ:

Դասական գրաբարի կանոններից կատարված շեղումներն այստեղ հիմնականում երկու տեսակի են.

1. հնչյունական
2. ձևաբանական

Այս գլխում, միջին հայերենի կանոններին համաձայն, առկա է երկ-հնչյունների պարզեցման միտում (*ոքու* հնչյունափոխություն, նաև *ա* ծայնավորի թուլացում): Մասնավորապես պատճառական բայերի *ուցան* ածանցի փոխարեն գործածված է *ցն* ածանցը, ինչպես օրինակ՝ «...զի նօսրացնեն⁴՝ զարճիճս...» (գրաբարյան ձևն է՝ նօսրացուցանեն) (էջ 443), «...հայիլն զաչաց լոյսն աւելցնէ...» (էջ 443), «...նա զփոքր տղեկան լուրջ աչքն սևացնէ...» (էջ 447), «...պուտ մի խըմցնեն...» (էջ 446), «...և թափանցնի...» (էջ 448) և այլն:

Բացի պատճառական *ուցան* ածանցի հնչյունափոխությունից՝ քննարկվող գլխում ի հայտ է գալիս նաև սոսկածանցավոր *ան* ածանցի փոփոխություն, որը հաստատում է այդ ժամանակաշրջանում *ա* ծայնավորի թուլացման միտումը (սա դրսևորվում է ոչ միայն բայական, այլև դերբայական ձևերում): Օրինակ՝ «...ալ ելնէ սրբածն...» (էջ 446), «... նա ոսկեգոյն կամ արծաթի գոյն ելնէ ի դմական...» (էջ 447), «...ելման ի ծովու երես...» (էջ 453), «... քար կու ելմայ...» (էջ 451), «...աղէկ մարդ պիտի որ ճանչնայ...» (էջ 451), «...լոյսն աւելնայ...» (էջ 452), «...աչաց ցաւ չտեսնէ...» (այս հատվածում առկա է *տեսանել* բայի այլ տարբերակ՝ «...վատ երազ չտեսնու...» (էջ 452), «...եթ վիշապ օծ տեսնու...» (էջ 452)) և այլն:

Ի դեպ, այս բայերից որոշները հանդիպում են նաև գրաբարյան ձևով, օրինակ՝ «...և յեմանու երկրն ելանէ...» (էջ 447), «...նոյնպէս ելանէ ի կրակէն...» (էջ 443), «...դեղնի ճանաչելն դժար է...» (էջ 451) և այլն: Այսինքն, նկատելի է հին և նոր ձևերի մրցակցություն, որը դրսևորվում է նաև այլ բայերի խոսքարհման ժամանակ՝ «...զարծաթն քաշէ ի յինքն...» (էջ 448), նաև՝ «...և արծաթ քարշող է՝ ...» (էջ 448):

Ա ծայնավորի թուլացման միտումը ուսումնասիրվող հատվածում դրսևորվում է ոչ միայն *ան*, այլև *ատ* ածանցի փոփոխությամբ: Այսպես, «...կտրտեն զինքն...» (էջ 443) օրինակում ընդգծված բայը թե՛ գրաբարում և թե՛ միջին հայերենում ունի կտրատել ձևը (հմտ.՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» և «Միջին հայերենի բառարանի»): Փաստորեն, այստեղ *ա* ծայնավորի անկում է տեղի ունեցել, որի արդյունքում ստացվել է կտրտել ձևը (այս օրինակը տվյալ հատվածում հանդիպում է երկու անգամ):

Գեղինակը ներկա ժամանակի կազմության համար գրաբարի կանոնավոր ձևերին զուգահեռ («...մարդ ի բերանն առնու...», «...մնայ ի մէջ

⁴ Ստացել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 442:
(Այս գրքից կատարվող մեքենայական թարգմանությունները կնշվեն տեքստում):

արծիծին...» (էջ 443), «...խասիաթն զինչ որ ի յեաղութն խասիաթ կայ...» (էջ 444), «...եաղութն ունի զայս...» (էջ 444), «...Աստուած գիտէ...» (էջ 444)՝ գործածում է նաև միջինհայերենյան շրջանում (12-րդ դար) ծագած *կը* (*կու*) մասնիկը: Օրինակ՝ «...գերկաթն ի յինքն կու քաշէ...» (էջ 447), «...Հնդիկքն խիստ կու խնդրեն զայս քարս...» (էջ 446), «...ամենայն ցեղն ի յօծու խորխ կու նմանի...» (էջ 446), «...ի մատն զայս քարս կու դնէ...» (էջ 446), «...և գնով կու առնուն...» (էջ 446) և այլն:

Ըստ վիճակագրական աղյուսակի՝ «Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց» գլխում *կը* (*կու*) մասնիկով կազմված ներկա ժամանակի 110 օրինակ է հանդիպում, իսկ գրաբարյան ներկայի կիրառությունները 157 են (վիճակագրական մանրամասնությունները տեղակայված են վեցերորդ էջի վիճակագրական աղյուսակում):

Ներկա ժամանակի կազմության ժխտական խոնարհման ձևերը ևս բացառություն չեն, և Դավրիժեցին այստեղ էլ կիրառում է թե՛ կանոնավոր («...զամենայն քար ուտէ և կտրէ և ոչ մաշի...» (էջ 443), «...ոչ կրանայ ի կրակն...» (էջ 443)), թե՛ անկանոն կառույցներ («...և ի կրակ չի այրիր...» (էջ 442), «...և թէ արծիճ չի գտանի...» (էջ 443), «...չի այրիր շորն...» (էջ 444), «...վատերագ և երազախաբ չի լինի...» (էջ 444), «...մարդ իոն չէ գնացեր...» (էջ 449) և այլն):

Դավրիժեցին այս եղանակիչը բայից անջատ գրելուց գատ՝ գործածում է նաև միասին գրությամբ, ինչպես օրինակ՝ «...և մեծ երկու և երեք մսխալ այլ կուլիմի...» (էջ 447), «...նա այս քարս զարծաթն կմբռնէ...» (հատկանշական է, որ Դավրիժեցին նշված բայը գրում է առանց *ը* հնչյունի) (էջ 448), «...Հնդիկքն խիստ կուգեն զայս...» (էջ 448), «...կառնուն բռչունքն...» (էջ 449), «...խուղայի կատէ...» (էջ 449) և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ գրաբարյան ներկայի ձևը տեքստում հիմնականում ունի աշխարհաբարյան ըղծական ապառնու, (մասամբ էլ՝ անցյալի) իմաստ (դրա մանրամասները ևս տեղակայված են վիճակագրական աղյուսակում): Այսինքն, այդ հատվածում տեղ գտած «կանոնավոր» ձևերն արդեն իմաստով բնավ էլ «կանոնավոր» չեն, և այստեղ հստակ նկատվում է գրաբարյան ներկա ժամանակի փոխակերպումը աշխարհաբարյան ըղծական ապառնի ժամանակի:

Տասնյոթերորդ դարի հեղինակը գերծ չի մնում նաև *վ*՝ կրավորական ածանցի կիրառությունից: Այս ածանցը հանդիպում է ոչ միայն «Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց» հատվածում, այլև ամբողջ գրքում: Սակայն նշված հատվածում *վ*՝ ածանցի կիրառություններն ավելի շատ են: Բերենք օրինակներ. «...և ներկուի կարմիր...» (էջ 444), «...ծախսեցաւ ի Հալւայ...» (էջ 445), «...քառասուն ռեալ էր ծախսեր...» (էջ 445), «...մէկնէկից բռանց կու ճանչլի...» (էջ 454) և այլն:

Այս հատվածում զուտ գրաբարյան բայերի օրինակները չափազանց քիչ են: Գրաբարին ոչ բնորոշ բայերը պայմանականորեն բաժանել ենք խմբերի.

- գրաբարի խոնարհման համակարգի պատմական փոփոխություններ, որը հիմնականում արտահայտված է բայական լծորդությունների փոփոխություններով: Օրինակ՝ «...և դեղին և զամենայն գոյն ընդունի...» (գրաբարյան ձևն է՝ ընդունե) (էջ 445), «...որ թէ բարակ չորով փաթաթիս...» (փաթաթես) (էջ 444), «...հարցաւ թէ զինչ լինի զայս...» (եհարց) (էջ 449), «...ի նորա ժամանակն ժածք եղաւ...» (եղև) (էջ 451), «...զաչաց բորն տանի...» (տանե) (էջ 443) և այլն:
- զուտ միջինհայերենյան բայեր կամ բարբառային արտահայտություններ՝ «...տանն երկու տակ թղթով բլլեն...» (էջ 443), «...ալմաստն կու կանայ...» (էջ 449), «...ութն օր չի փրթիր...» (էջ 446), «...նա օգտե Աստուծով...» (էջ 446), «...ոչ կրանայ ի կրակն...» (էջ 443) և այլն:
- աշխարհաբարյան բայեր՝ «...ով ոք իր հետն վերցնե...» (էջ 444), «...փիրուզա եմ հագել...» (էջ 448) և այլն:
- «Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց» զխում շատ են նաև միջինհայերենյան շրջանում առաջացած բայերը, որոնք արտահայտված են գրաբարի խոնարհման համակարգին բնորոշ ձևերով: Օրինակ՝ «ի ինքն քաշե...» (էջ 448), «...և չպապեքին երկու դրամ արծաթ արծե...» (էջ 448), «...որ զպատուական ակունս հարթե...» (էջ 448), «...Ֆառան կենայ...» (էջ 448), «...և արճով կտրի...» (էջ 443), «...ի կրակն կրանայ...» (էջ 445) և այլն:

Այս կարգի բայերից ամենաշատը հանդիպում են զուտ միջինհայերենյան բայերը կամ բարբառային արտահայտությունները:

Այստեղ հանդիպում են նաև միջինհայերենյան շրջանում առաջացած վաղակատար ու հարակատար դերբայների կիրառություններ. ընդ որում, հարակատար դերբայն ունի թե անկախ, թե կախյալ գործածություն: Բերենք օրինակներ. «...և կայ որ ալ ելնե սրբածն...» (էջ 446) (ենթակա), «...բազունք են վկայած...» (էջ 443), «...փորցաութեան լավ է, փործած է...» (էջ 443) (ստորոգելի), «հարեն կռանով ի բլլած թղթին վերայ...» (էջ 443) (որոշիչ), «...և մնայ կտրած ալմաստն ի ջրոյ տակն...» (էջ 444) (որոշիչ), «...որ ի սրբածն ելնե...» (էջ 446) (անջատման անուղղակի խնդիր) և այլն:

Վաղակատար դերբայի կիրառության ժամանակ հեղինակը գործածում է և՛ չ-ով, և՛ ր-ով ձևեր: Օրինակ՝ «...նա չի այրիր...» (էջ 442), «...այլ այդպիսիք չի լինիր...» (էջ 444), «...դուր չի լինիր...» (էջ 445), «ես չեմ հաւատար...» (էջ 445),

* Այս բայի զուտ միջինհայերենյան ձևն է՝ *փրթի* (համեմ. Ռ. Ղազարյանի «Միջին հայերենի բառարանի»), և մեր կարծիքով նշված ձևը պատճառ է բարբառային ազդեցության:

«...մարդ չի ազատիլ...» (էջ 443), «...չի սփռիլ, այսինքն տաղըլմիշ լինիլ...» (էջ 443), «...զինքն ոչ թողուր...» (էջ 444) և այլն:

Ամփոփելով նշենք, որ մեր կարծիքով, այս գլխի ու ամբողջ գրքի լեզվական մեծ տարբերությունը, թերևս, առաջացել է նաև այն պատճառով, որ այստեղ հեղինակն ուղղակի վերապատմում է Սարգիս քահանայի ասածները, իսկ հեղինակային խոսքում արդեն լեզվական տարբերությունները համարյա թե բացակայում են. «Ձայս բանքս, որք վասն ականց են՝ զոր ահաւասիկ գրեցաք, այժմու ժամանակին ժամանեալ ոմն քահանայ Սարգիս անուամբ ի մերս ազգէ, հմուտ և տեղեակ բանից գրոց, որ բնակեալ էր ի քաղաքն Բերիայ՝ որ այժմ ասի Հալապ» (էջ 448):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՐՅՈՒՄԱԿ

Եղանակային ժամանակներ			Ընդհանուր քանակը
կը (կույ)-ով սահմանական ներկա			110
կը (կույ)-ով սահմանական անցյալ			-
Ժխտական ներկա			55
Ժխտական անցյալ			2
վաղակատար ներկա	հաստատական		6
	Ժխտական	չէ-ով	25
		ոչ-ով	1
վաղակատար անցյալ	հաստատական		1
	Ժխտական		1
ըղծական ապառնի (գրաբ. ներկայի կառույցով)			154
ըղծական անցյալ			-
անցյալ կատարյալ			3
հրամայական ժամանակ			-
հարակատար ներկա			5
հարակատար անցյալ			-
ապակատար ներկա			-
ապակատար անցյալ			-
հարկադրական եղանակ			2